ձկէ խուրմէ քանզի վարձ վաստակոյ իւր է, որում
տքնի ցայգ և ցերեկ վասն տանն հայոց հաւա-
տարմաբար, և լցուսցէ Տէր ամենայն պակասու-
թիւն նոցա բարեվարիւք ’ի այսմ աշխարհի և ’ի
փառս յաւիտենական ’ի հանդերձելումն, գրուե-
ցաւ ’ի գրունս և այլն։

| | |
|---|---|
| Վկայեմք, որ ձեռնագրե- | Ս. Տ. ○ |
| ցին, կնքեցին և յանձնե- | Վ. Տ. ○ |
| ցին։ | Գ. Տ. ○ |
| Մ. Ի. ○ | |
| Մ. Գ. ○ | |

Օրինակ Վաչխա Պարոնու։

## ԳԼՈՒԽ ՀԷ.

Յայտնի լինի ամենեցուն, որ ես Մարտիրոս
որդոյ Բարսեղի ’ի գեօղաքաղաքէ լօռի կատարե-
լապէս պարտականեմ առ Տեառն Վրթանէսի որ-
դոյ Սեղբեստրոսի քաղաքէն աստապատու բո-
վանդակն տուգանօքն երկու հարիւր դահեկան
երծաթ, հատուցումն նորին լաւ և հաստատապէս
առնելն իմ առ նոյն Վրթանէսի և կամ իւր կատա-
կակատարին ժառանգին և անուանելոյն, պար-
տական արարի իմ անձն կատակակատարն ժա-
ռանգն և անուանեալն յատկապէս վկայից ներ-
կայութեան ում ’ի այսմ ձեռգրեցի և կնքեցի